


02
ՀՈՒԼԻՍԻ
2021



ՀՀ 2020Թ. ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



Սույն տեղեկանքն ամփոփում է «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) եզրակացության առավել ուշագրավ դիտարկումները:

Նշենք, որ սույն եզրակացությունը կազմելիս, բյուջեի կատարողականի տեսանկյունից, ԿԲ-ի ուշադրության կենտրոնում են եղել այնպիսի կարևոր սկզբունքների պահպանման հարցեր, ինչպիսիք են՝ միջնաժամկետ պարտքի կայունության ապահովումը, հարկաբյուջետային քաղաքականության պարբերաշրջանային ուղղվածությունն ու դիրքը, ինչպես նաև երկարաժամկետ աճին նպաստումը: Այս առումով, **ԿԲ եզրակացության մեջ ընդգծված են որոշ ուշագրավ (մտահոգիչ) գնահատականներ, որոնք ներկայացնում ենք ստորև:**

Տնտեսական ակտիվության զգալի անկման և համախառն թույլ պահանջարկի պայմաններում, **Հայաստանում ցածր գնաճային միջավայրը, որոշակի տատանողականությամբ, 2020 թվականին պահպանվել է մինչև նոյեմբեր ամիսը:** Սակայն, պայմանավորված ՀՀ ներմուծվող մի շարք պարենային ապրանքների շուկաներում տարեվերջի գնաճային դրսևորումներով, ինչպես նաև տնտեսությունում ռիսկերի աճի հետևանքով դրամի արժեզրկմամբ՝ **2020 թվականի դեկտեմբերին 12-ամսյա գնաճը մոտեցել է ԿԲ նպատակային ցուցանիշին՝ կազմելով 3.7%: Գնաճային դրսևորումները հատկապես մտահոգիչ են՝ հաշվի առնելով, որ 2021թ. մայիսին 12-ամսյա գնաճը կազմել է 5.9%:**

Պետական բյուջեի ծախսերի կատարումը 2020 թվականին ուղեկցվել է հարկաբյուջետային կանոններով նախատեսված բացառիկ դեպքի կիրառմամբ, որի պարագայում բյուջեի պակասուրդը եղել է ավելի մեծ, քան կապիտալ ծախսերն են, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճը գերազանցել է նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի միջին տեմպը: Նշված պայմաններում, չնայած պետական բյուջեի ծախսերը համախառն պահանջարկի վրա ունեցել են զգալի

ընդլայնող ազդեցություն՝ կապիտալ ծախսերի ծավալներն ու դրանց արդյունավետության բարձրացումը շարունակել է խնդրահարույց լինել տնտեսական ներուժի պահպանմանն ու ընդլայնմանն ուղղված երկարաժամկետ նպատակների իրագործման տեսանկյունից: Այս առումով, ԿԲ-ն կարևորել է հանրային ներդրումների կառավարման համակարգի ներդրման և հետագա կատարելագործման ուղղությամբ քայլերի իրականացումը:

Տնտեսական ճգնաժամի պայմաններում 2020 թվականին ՀՀ կառավարության կողմից որդեգրված հարկաբյուջետային հակացիկլիկ քաղաքականության մասով ԿԲ-ն խնդրահարույց է համարել նաև **օժանդակության միջոցառումների մասնակի և ոչ ամբողջական ծավալով իրականացումը**: Մասնավորապես նշվում է, որ 2020 թվականին սոցիալ-տնտեսական օժանդակության, հատկապես **երկարաժամկետ տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերն ամբողջ ծավալով չեն իրականացվել**, և արդյունքում կառավարության հակաճգնաժամային ազդեցության չափը 2020թ. ՀՆԱ-ի վրա նախատեսվածից 0.8 տոկոսային կետով ցածր է եղել:

Նշենք նաև, որ հարկաբյուջետային քաղաքականության մասով՝ երկարաժամկետ հիմնարար կարգավորումների տեսանկյունից ԿԲ կողմից հատկապես կարևորվել է շահութահարկի գծով օրենսդրական կարգավորումների իրականացումն ու դրա շարունակականության ապահովումը՝ հարկային բեռի վերաբաշխման և տնտեսության մրցունակության բարձրացման համար:

Այսպիսով, շահութահարկի գծով հարկային վերանայումներով և պետական բյուջեի ծախսերի ավելացմամբ ուղեկցվող՝ համախառն պահանջարկի վրա էական խթանող ազդեցությամբ հակացիկլիկ հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում, **2020 թվականին հարկաբյուջետային ազդակը կազմել է 5.0**:

Ստեղծված իրավիճակում, հարկաբյուջետային կանոններով նախատեսված բացառիկ դեպքի կիրարկման արդյունքում, 2020 թվականին **էապես (2019-ի նկատմամբ 13.5 տոկոսային կետով) աճել է նաև ՀՀ կառավարության պարտքի բեռը ՀՆԱ-ի նկատմամբ՝ հատելով կանոններով սահմանված 60% սահմանային շեմը, և կազմել է 63.5%**: Նշենք նաև, որ պարտքի աճը պայմանավորված է եղել պետական բյուջեի ծախսերի 16.3% աճով, իսկ պարտքով ներգրավված ֆինանսական միջոցները հիմնականում ուղղվել են ընթացիկ (սոցիալական նշանակության) ծախսերը ֆինանսավորելուն: Կարևոր համարելով միջնաժամկետ պարտքի կայունության նպատակի անվերապահ իրագործման անհրաժեշտությունը՝ ԿԲ-ն առանցքային է համարել կառավարության կողմից պարտքի նվազեցմանն ու կայունացմանն ուղղված միջոցառումների հետևողական իրականացումը:

Համաձայն ՀՀ ԿԲ եզրակացության՝ 2020 թվականին հարկաբյուջետային և դրամավարկային ընդլայնող քաղաքականությունների արդյունավետ համադրման շնորհիվ ՀՀ-ում հնարավոր է եղել ապահովել մակրոտնտեսական կայունություն: Այդուհանդերձ, ԿԲ-ն խնդրահարույց է գնահատել՝

- հակաճգնաժամային միջոցառումների մասնակի և ոչ ամբողջ ծավալով իրականացումը,
- կապիտալ ծախսերի ծավալների և դրանց արդյունավետության բարձրացման հարցը:

ԿԲ-ի գնահատմամբ առանցքային են՝

- առաջիկա տարիներին հարկաբյուջետային կարգավորումների շարունակական իրականացման միջոցով միջնաժամկետ պարտքի կայունության նպատակի հստակ ամրագրումը,
- համապատասխան ծրագրային ռազմավարության ներքո՝ տնտեսության կայուն զարգացման հիմքերի ամրապնդումը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: